

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝

23.09.2022 թ. կայացած նիստի թիվ 1 արձանագրություն

Օրակարգ

1. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
2. Ֆակուլտետի գիտխորհրդի 2022-2023 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատում:
3. Ընթացիկ հարցեր :

Գիտխորհրդի 36 անդամներից նիստին ներկա էին 25 -ը: Գ.Բարսեղյանը ողջունեց գործընկերներին, շնորհավորեց նոր ուսումնական տարվա մեկնարկի առթիվ: Նա, անրադառնալով օրակարգի առաջին հարցին՝ անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատմանը, խոսքը փոխանցեց փոխդեկան Մ.Յաղուրյանին, ով ներկայացրեց անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների տվյալները:

Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց առաջին կիսամյակում հետևյալ ուսանողներին առաջադրել անվանական կրթաթոշակի:

1. Շալունց Նարե Անդրանիկի «Լեզվաբանություն» մասնագիտության «Կիրառական Լեզվաբանություն» կրթական ծրագրի մագիստրատուրա 2 կուրսի ուսանողուհի/Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ /:
2. Քոսակյան Մելինե Արմենի «Լեզվաբանություն» մասնագիտության «Միջմշակութային հաղորդակցություն» կրթական ծրագրի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի /Ֆ.Վերֆելի անվան կրթաթոշակ/:
3. Դոլինյան Նելլի Հայկի «Լեզվաբանություն» մասնագիտության «Անգլերեն լեզու և իսպաներեն լեզու» կրթական ծրագրի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի /Հ.Աճառյանի անվան կրթաթոշակ/:

Գ.Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ Ֆակուլտետի գիտխորհրդի 2022-2023 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատմանը: Միաձայն քվեարկության արդյունքում հաստատվեց 2022-2023 ուս. տարվա աշխատանքային պլանը:

Ընթացիկ հարցեր

- Գ.Բարսեղյանը խնդրեց ամբիոնների վարիչներին իրենց ամբիոններում կազմակերպել դասալսման գործընթացը, ինչը կխթանի ուսումնական գործընթացը:
- Դեկանը հորդորեց, որ ամբիոնների դասախոսները կարճ ժամկետներում ավարտեն MOODLE համակարգում նյութերը ներբեռնելու գործընթացը:

Միաձայն քվեարկության արդյունքում որոշեցին .

- Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոց. Անուշ Ռոստոմի Սեդրակյանի «20-րդ դարի ֆրանսիական պոեզիայի հիմնական ուղենիշները» մենագրությունը երաշխավորել տպագրության:
- Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց առաջին կիսամյակում հետևյալ ուսանողներին առաջադրել անվանական կրթաթոշակի:

Շալունց Նարե Անդրանիկի «Լեզվաբանություն» մասնագիտության «Կիրառական Լեզվաբանություն» կրթական ծրագրի մագիստրատուրա 2 կուրսի ուսանողուհի/Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ /:

Քոսակյան Մելինե Արմենի «Լեզվաբանություն» մասնագիտության «Միջմշակութային հաղորդակցություն» կրթական ծրագրի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի /Ֆ.Վերֆելի անվան կրթաթոշակ/:

Դոլինյան Նելլի Հայկի «Լեզվաբանություն» մասնագիտության «Անգլերեն լեզու և իսպաներեն լեզու» կրթական ծրագրի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի /Հ.Աճառյանի անվան կրթաթոշակ/:

- Երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Ս. Գասպարյանի և Ա. Պետրոսյանի հեղինակությամբ ստեղծված «Domain-specific English: Insight into Health-care Setting» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության:
- «Միջմշակութային հաղորդակցություն (ֆրանսերեն)» մագիստրատուրայի կրթական ծրագրի տնտղությունը սահմանել երեք կիսամյակ:
- «Միջմշակութային հաղորդակցություն (գերմաներեն)» մագիստրատուրայի կրթական ծրագրի տնտղությունը սահմանել երեք կիսամյակ:
- Հավանություն տալ «Միջմշակութային հաղորդակցություն (իսպաներեն)» և «Միջմշակութային հաղորդակցություն (իտալերեն)» մագիստրոսական ծրագրերը մեկուկես տարվա տնտղությամբ իրագործելու առաջարկին և սկսել համապատասխան գործընթացը:
- Հետևյալ ուսանողներին առաջադրել «Լավագույն ուսանող» մրցույթին.

Շալունց Նարե Անդրանիկի
«Լեզվաբանություն» մասնագիտություն, «Կիրառական
լեզվաբանություն» մագիստրոսի կրթական ծրագիր, 2-րդ
կուրս

Խաչատրյան Ֆարիդա Արտաշեսի
«Լեզվաբանություն» մասնագիտություն, «Թարգմանչական
գործ` անգլերեն և հայերեն» բակալավրի կրթական ծրագիր,
4-րդ կուրս

Սամվելյան Դավիթ Սեյրանի «Լեզվաբանություն»
մասնագիտություն, «Անգլերեն լեզու, գերմաներեն լեզու և
հաղորդակցություն» բակալավրի կրթական ծրագիր, 3-րդ
կուրս

ԵԼՀ ֆակուլտետի

ղեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ`

գիտխորհրդի քարտուղար,

բ.գ.թ., դոցենտ`

23.09.2022 թ.



Գ.Բարսեղյան



Մ.Դավալյան